ՎՐԱՍՏԱՆԻ XVII Դ. ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ԶԱՔԱՐԻԱ ՔԱՆԱՔԵՌՑՈՒ «ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ» ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՎԻՐԱԲՅԱՆ Ա. Ս.

Թեև Վրաստանի XVII դարի պատմության ուսումնասիրությունը հիմնականում վրաց պատմիչների (Վախուշտի Բագրատիոնի, Փարսադան Գորգիջանիձե) վկայությունների վրա է խարսխված, հայ ուշմիջնադարյան պատմագիրները ևս զգալի ուշադրության են արժանացրել Վրաստանի այդ շրջանի պատմության անցքերին: Ի տարբերություն Առաքել Դավրիժեցու, որի «Գիրք պատմութեանց»-ը վրաց պատմագիտության մեջ դիտարկվել է որպես XVII դ. Վրաստանի պատմության կարևոր սկզբնաղբյուր[1], Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրութիւն»-ը վրաց պատմաբանների տեսադաշտից դուրս է մնացել: Եվ դա այն դեպքում, երբ այն զգալի նյութ է պարունակում վրաց ժողովրդի XVII դ. հակապարսկական պայքարի վերաբերյալ: Վրաստանի պատմության հանդեպ Զաքարիա Քանաքեռցու հետաքրքրությունը պետք է պայմանավորել ոչ միայն երկու հարևան ժողովուրդների դարավոր պատմական կապերով, այլև վրաց հակապարսկական ապստամբությունների օրինակը հայկական միջավայրում սերմանելու ձգտմամբ:

Զ. Քանաքեռցու «Պատմագրության» մեջ ուշագրավ տեղեկություններ կան պարսկական լծի դեմ Գեորգի Սահակաձեի գլխավորած ապստամբության վերաբերյալ: Վերջինիս սոցիալական պատկանելության վերաբերյալ Զ. Քանաքեռցին լռում է: Սակայն հայտնի է, որ Գ. Սահակաձեն բարձրաստիճան ազնվուր էր և կրում էր «մեծ մովրով» տիտղոսը[2]: Գ. Սահակաձեի հեղինակության ու դիրքի բարձրացմանը նպաստել էր նաև այն հանգամանքը, որ նրա քույրը Քարթլիի թագավոր Լուարսաբ II-ի (1592-1622) կինն էր[3]: Արքան, սակայն, տուրք տալով Գ. Սահակաձեից դժգոհ վրաց իշխանների և հատկապես իր ազգական Շագիման Բարաթաշվիլու հորդորներին, նախ բաժանվում է կնոջից[4], ապա նախկին աներորդուն սպանելու անհաջող փորձ է անում: Դրանից հետո Գ. Սահակաձեն 1612 թ. հե-

---

[1] *Տե՛ս* Կուցիա Կ., *Առաքել Դավրիժեցու տեղեկությունները Վրաստանի մասին, Թբիլիսի, 1974 (վրացերեն):*

[2] **Вахушти Багратиони.** *История царства грузинского, перевел, снабдил предисловием, словарями и указателем Н. Т. Накашидзе, Тбилиси, 1976, с. 49-50 (այսուհետև՝ Вахушти Багратиони).*

[3] **Парсадан Горгиджанидзе,** *История Грузии, перевод Р. Кикнадзе и В. Путуридзе, исследование и указатели Р. Кикнадзе, Тбилиси, 1990, с. 71 (այսուհետև՝* Парсадан Горгиджанидзе); Առաքել Դաւրիժեցի, *Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանլարյանի, Ե., 1990, էջ 121:*

[4] **Вахушти Багратиони,** *с. 52;* Առաքել Դաւրիժեցի, *էջ 122:*

ուանում է Իրան[7]: Նա հույս ուներ այդ երկրի զինված ուժերն օգտագործել իր հակառակորդներին հաղթելու և Քարթլին գրավելու համար: Հենց այդ նպատակով էլ Գ. Սահակաձեն 1615 թ. դեպի Քարթլի և Կախեթ կատարած արշավանքի ժամանակ, ուղեկցում է շահ Աբբաս I-ին (1587-1629): Շահը ձերբակալում է Լուարսաբ II-ին և իր հետ տանում Իրան[8]: Զ. Քանաքեռցին այս իրադարձություններին չի անդրադառնում՝ նշելով, որ այդ մասին պատմում է Ա. Դավրիժեցին[7]:

Վրաստանն իրեն ենթարկելու մտադրությամբ 1625 թ. շահ Աբբաս I-ը Կարչիխա խանի և Գ. Սահակաձեի գլխավորությամբ բանակ է ուղարկում այնտեղ[8]: Զ. Քանաքեռցին, սակայն, նշում է, որ շահը նրանց Վրաստանում էր թողել դեռևս 1615 թ.՝ Կարչիխային հանձնարարելով Վրաստանը հպատակեցնելուց հետո գահ բարձրացնել Գ. Սահակաձեին[9]: Սակայն դա վրացական աղբյուրներով չի հաստատվում: Ըստ Վախուշտիի՝ 1615 թ. շահ Աբբաս I-ին ուղեկցելով Վրաստան՝ Գեորգի Սահակաձեն մտահոգված էր միայն Քարթլիի գրավման խնդրով: Նա տեղյակ էր երկիրը նվաճելուց հետո այն մահմեդականացնելու շահի նպատակին: Վախուշտիի համաձայն՝ Գեորգի Սահակաձեն նույնիսկ շահին հորդորում է Վրաստան արշավել ձմռանը, որպեսզի եղանակային վատ պայմաններում բնակչությանը չհաջողվի լեռները փախչել[10]: Վերոհիշյալ վրաց պատմիչների պնդմամբ, երբ Գ. Սահակաձեն և Կարչիխա խանը 1625 թ. սկզբին ժամանեցին Վրաստան, երկրում Իրանի դեմ համընդհանուր ապստամբություն էր սկսվել: Գ. Սահակաձեն, իմանալով այդ մասին, որոշեց իր ձեռքը վերցնել պայքարի ղեկավարությունը[11]: Թուրք պատմագիր Նայիման իր հերթին պնդում է, որ նա հակապարսկական ապստամբությունը ծրագրել էր նախօրոք համաձայնության գալով Կախեթի թագավոր Թեյմուրազ I-ի (1606-1648) հետ: Վերջինս պետք է դարանակալեր Վրաստանի նեղ կիրճերից մեկի մոտ՝ այնտեղով անցնող պարսկական զորքին ջախջախելու համար[12]: Ի տարբերություն այս վկայությունների՝ Զ. Քանաքեռցին դեպքերն այլ կերպ է ներկայացնում:

---

[5] Бердзенишвили Н., Дондуа В., Думбадзе К., Меликишвили Г., Месхиа Ш. *История Грузии, т. I, с древнейших времен до 60-х годов XIX века, Тбилиси, 1962, с. 302 (այսուհետև՝ История Грузии, т. I).*

[6] Զաքարիա Սարկաւագ, Պատմագրութիւն, հ. I, Վաղարշապատ, 1870, էջ 26: Պատմիչը Լուարսաբին սխալմամբ անվանում է Շավարսափ (Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601-1620 թթ.), հ. I, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Ե., 1974, էջ 548):

[7] Զաքարիա Սարկաւագ, հ. I, էջ 26: Առաքել Դավրիժեցին իր երկի մեջ մի ընդարձակ գլուխ է նվիրել Գեորգի Սահակաձեի ապստամբությանը նախորդած իրադարձություններին (տե՛ս Առաքել Դաւրիժեցի, էջ 120-144):

[8] *История Грузии, т. I, с. 301.*

[9] Զաքարիա Սարկաւագ, հ. I, էջ 26:

[10] Вахушти Багратиони, с. 52-53.

[11] *История Грузии, т. I, с. 302.*

[12] Թուրքական աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. I, թարգմանությունը թուրքերեն բնագրերից, ներածությունը, ծանոթագրությունները, տերմինա-

Խնդիրն այն է, որ շահ Աբբաս I-ը Կարչիխա խանին և Գ. Սահակաձին հանձնարարել էր ոչնչացնել վրացի ազնվուրներին և թավադներին: Դա պետք է տեղի ունենար Մուղրանում՝ Աղայան դաշտում[13]: Սակայն պարսիկների մտադրությունները չեն իրականանում: Շահ Աբբասը Կարչիխա խանին է ուղարկում գաղտնի նամակ, որի բովանդակությունը, ըստ Զ. Քանաքեռցու, հետևյալն էր. «Ի Շահ-Աբասէ մալում լինի քեզ՝ Ղառչղայ Խան: Զի յորժամ աշխարհդ Վրաց ընդ ձեռամբ քո արասցես, եթէ ինչ իւիք և է՝ ջանա՛ սպանանել զՄովրաւդ (Գեորգի Սահակաձին - Վ. Ա.), զի մի՛ լիցի մեզ հակառակ, և կամ պակասութիւն ինչ թագաւորութեանս մերում»[14]: Այսպիսով, ըստ նամակի, Գ. Սահակաձեն ևս պետք է սպանվեր: Սակայն նամակն իր նպատակին չի ծառայում, քանզի ընկնում է վերջինիս ձեռքը: Վախուշտիի հաղորդմամբ՝ նամակի բովանդակությունից զայրացած Գ. Սահակաձեն սպանում է նամակատարին և գաղտնի այցելում Զուրաբ Էրիսթավին՝ առաջարկելով կոտորել կզլբաշներին[15]: Զ.Քանաքեռցու և վրաց պատմիչի վկայությունների համադրումից կարելի է եզրակացնել, որ Գ. Սահակաձեն ապստամբության չի ձգտել այնքան ժամանակ, քանի դեռ իր կյանքին և Վրաստանի թագավոր դառնալու հեռանկարին վտանգ չէր սպառնում: Ասվածի վառ ապացույցն է Զ. Քանաքեռցու վկայություններից ևս մեկը: Անդրադառնալով շահական նամակի գաղտնազերծմանն ու նամակատարի սպանությանը՝ պատմիչը նշում է, որ դրանից հետո, հանդիպելով վրաց իշխանների հետ, Գ. Սահակաձեն խոստովանում է իր կողմից սեփական հայրենիքին դավաճանած լինելու հանգամանքը[16]:

Հասկանալով հապաղման վտանգը՝ Գ. Սահակաձեն, առանց ժամանակ կորցնելու, գործի է անցնում և 1625 թ. մարտի 25-ին գլխովին ջախջախում Մարտկոպիի դաշտավայրում տեղակայված պարսկական բանակը[17]: Անդրադառնալով այդ ճակատամարտին՝ Զ. Քանաքեռցին գրում է. «Եվ կոտորեցին զնոսա (պարսիկներին – Վ. Ա.) որպէս մրջիւն ջերմ ջրով, եւ սպանին զՂառչղայ Խանն, զՅուսուփ Խանն եւ զՂազաղ Խանն»[18]: Պատմիչի այս հաղորդումը հաստատ-

---

բանական բառարանով և հավելվածով կազմեց՝ Ա. Խ. Սաֆրաստյան, Ե., 1961, էջ 85 (այսուհետև՝ Թուրքական աղբյուրները, հ. I):

[13] История Грузии, т. I, с. 302.

[14] Զաքարիա Սարկաւագ, հ. I, էջ 27, հմմտ. Вахушти Багратиони, с. 56; Թուրքական աղբյուրները, հ. I, էջ 89: Առաքել Դավրիժեցին այս իրադարձությունը չի անդրադառնում, իսկ որպես Զաքարիա Սարկավագի աղբյուր հանդես է գալիս Ազլոց վանքից ոմն Պետրոս Աբեղա (Զաքարիա Սարկաւագ, հ. I, էջ 28):

[15] Вахушти Багратиони, с. 56.

[16] Զաքարիա Սարկաւագ, հ. I, էջ 28:

[17] История Грузии, т. I, с. 303: Վրացի հեղինակների կողմից ավելի վաղ գրված աշխատություններից մեկում Մարտկոպիի ճակատամարտը սխալմամբ թվագրվում է 1623-ով (Бердзенишвили Н., Джавахишвили И., Джанашиа С. История Грузии, с древнейших времен до начала XIX века, под редакцией С. Джанашиа, ч. 1, Тбилиси, 1946, с. 361 (այսուհետև՝ История Грузии, ч. 1):

[18] Զաքարիա Սարկաւագ, հ. I, էջ 28:

վում է վրացական և հայկական աղբյուրներով[19]: Թվում էր, թե այս ճակատամարտից հետո ժողովուրդը թեկուզ կարճ ժամանակով պետք է աղատ շունչ քաշեր, սակայն Զ. Քանաքեռցու մի վկայությունից պարզվում է, որ այն սկսում է բռնությունների ենթարկվել հենց հայրենակիցների կողմից: Պատմիչի խոսքերով՝ վրացի զինվորները սկսում են թալանել ոչ միայն պարսիկներին, այլև «զքրիստոնէից զինչն կողոպտէին եւ մարդոյ չառնէին վնաս»[20]:

Մարտկոպլի ճակատամարտից հետո շահ Աբբաս I-ը Վրաստան է ուղարկում հատուկ զորքեր՝ իր թիկնազորի պետ Իսա խանի[21] գլխավորությամբ: Մարաբդա գյուղի մոտ՝ Ալգեթ գետի ափին, 1625 թ. հուլիսի սկզբին կողմերի միջև տեղի է ունենում արյունահեղ ճակատամարտ, որում հաղթում են պարսիկները[22]: Ճակատամարտին մասնակցում էր նաև Երևանի խան Ամիրգունան, որին, Զ. Քանաքեռցու խոսքերով, մահացու վիրավորում է ոմն աղա Թանգի[23]: Այն փաստը, որ Ամիրգունան մասնակցել է Մարաբդայի ճակատամարտին, հաստատում է Փարսադան Գորգիջանիձեն: Ըստ նրա՝ Ամիրգունային վիրավորել է Թեյմուրազ I-ը[24]:

Զ. Սարկավագը, նկարագրելով Մարաբդայի ճակատամարտը, այնուհետև նշում է, որ դրանից հետո Գ. Սահակաձեն հեռանում է Թուրքիա: Սակայն իրականում նա Թուրքիա էր հեռացել 1626 թ.՝ Բազալեթի ճակատամարտում Թեյմուրազ թագավորին պարտվելուց հետո: Իսկ Մարաբդայի ճակատամարտից հետո Գ. Սահակաձեն հեռանում է Սամցխե՝ պայմանավորված պարսիկների՝ Քարթլի նոր ներխուժմամբ[25]: Տեսնելով, որ զենքի միջոցով չի կարողանում հպատակեցնել Վրաստանը՝ շահ Աբբաս I-ը ռուսական դեսպանի միջոցով Թեյմուրազին հայտնում է պատերազմը դադարեցնելու, վրաց գերիներին վերադարձնելու և կախեթական թագավորությունը վերականգնելու իր մտադրության մասին: Ի վերջո, Աբբաս I-ը 1625 թ. Թեյմուրազ I-ին ճանաչում է Քարթլի-Կախեթի թագավոր[26]: Գ. Սահակաձեն, հավանաբար ցանկանալով տիրանալ վրաց գահին, Բազալեթում կռվում է Թեյմուրազի հետ և պարտվելով փախչում է Թուրքիա, որտեղ էլ սերասքեր Խուսրև փաշայի հրամանով գլխատվում է[27]:

---

[19] Парсадан Горгиджанидзе, с. 77, Вахушти Багратиони, с. 56-57; Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. I, կազմեց Վ. Ա. Հակոբյան, Ե., 1951, էջ 145 (այսուհետև՝ Մանր ժամանակագրություններ):

[20] Զաքարիա Սարկաւագ, հ. I, էջ 28:

[21] Զաքարիա Քանաքեռցին Իսա խանին անվանում է Շոռչի-բաշի: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ վերջինս զբաղեցնում էր արքունի թիկնազորի հրամանատարի՝ կորչիբաշու պաշտոնը, որին էլ պատմիչը սխալմամբ վերոհիշյալ ձևով է կոչում (նույն տեղում, էջ 29):

[22] История Грузии, т. I, с. 303.

[23] Զաքարիա Սարկաւագ, հ. I, էջ 30:

[24] Парсадан Горгиджанидзе, с. 78.

[25] История Грузии, т. I, с. 303.

[26] Նույն տեղում, էջ 304, Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 94:

[27] Вахушти Багратиони, с. 61; Парсадан Горгиджанидзе, с. 83; Թուրքական աղբյուրները, հ. I, էջ 59:

Թուրքիայի օգնությանն ապավինելով՝ 1631 թ. Թեյմուրազը պատերազմ է սկսում Իրանի դեմ: Շահ Աբբաս II-ը (1642-1666) Քարթլիի իշխանությունը հանձնում է մահմեդականություն ընդունած Ռոստոմին (1633-1658), որն իրանական խոշոր զորաբանակով արշավում է Քարթլի: Թեյմուրազը 1632 թ. ստիպված հեռանում է Իմերեթիա, իսկ Ռոստոմը տիրանում է Քարթլիին: Սակայն իրադարձությունները այսքանով չեն ավարտվում: Թեյմուրազը 1634 թ. վերադառնում է Կախեթ և շուրջ 14 տարի կատաղի պայքար ծավալում Ռոստոմի դեմ[28]: Նա օգնության ակնկալիք ուներ Ռուսաստանից, որի հովանավորության տակ էլ փորձում էր միավորել Վրաստանը: Սակայն դեպքերը դասավորվում են ի վնաս Թեյմուրազ I-ի: Վերջինիս նախ հրաժարվում է օգնել Ռուսաստանը, ապա արքայի ճամբարը լքում են նաև Քարթլիի նրան հետևած թավադները[29]:

Օգտվելով վերը նշվածից Ռոստոմը 1648 թ. իրանական զորքերով շարժվում է Կախեթ: Նրա և Թեյմուրազի զորքերի միջև վճռական ճակատամարտը տեղի է ունենում Մահարոյում: Թեյմուրազի բանակը գլխավորում էր նրա որդի Դավիթը, որը, Զ. Քանաքեռցու խոսքերով «...խնայեաց ի ծերութիւն հօրն (Թեյմուրազին - Վ. Ա.), եւ ոչ եթող մտանել ի պատերազմ: Այլ ինքն մտեալ ի զգեստ պատերազմին՝ զինեցաւ ընդ դէմ նոցա»[30]: Ճակատամարտն ավարտվում է Ռոստոմի զորքերի հաղթանակով: Զ. Քանաքեռցու վկայությամբ՝ այս ճակատամարտում Դավիթը զոհվում է[31]:

Որդու մահից հետո Թեյմուրազը որոշում է շահ Աբբաս II-ի հետ համաձայության գալ և գնում է նրա մոտ: Վերջինս Թեյմուրազին ջերմ է ընդունում և նույնիսկ խոստանում Կախեթի գահին բարձրացնել նրա թոռ Հերակլին, եթե վերջինս ներկայանա իրեն և ճանաչի շահական իշխանությունը: Սակայն, քանի որ Հերակլը հապաղում է դա անել, Թեյմուրազին բանտ են նետում, որտեղ էլ 1663 թ. մահանում է[32]: Զ. Քանաքեռցին այս դեպքերը մի փոքր այլ կերպ է ներկայացնում. շահը Թեյմուրազին սիրով ընդունելուց հետո Ռոստոմին նամակ է գրում՝ պահանջելով իշխանությունը հանձնել Թեյմուրազին: Վերջինս, ըստ հայ պատմիչի, մահանում է ոչ թե բանտում, այլ Կախեթի ճանապարհին: Բացի այդ, համաձայն Զ. Քանաքեռցու, շահը Հերակլին հրավեր է ուղարկել Թեյմուրազի մահից հետո[33]:

Թեյմուրազ I-ից հետո Քարթլի-Կախեթի միանձնյա տիրակալ է դառնում անժառանգ Ռոստոմը: Գահաժառանգության խնդիրը լուծելու նպատակով նա որդեգրում է ոմն Լուարսաբի: Վերջինիս ինքնության վերաբերյալ Վախուշտի Բագրատիոնին, Փարսադան Գորգիջանիձեն և Զ.Քանաքեռցին տարակարծիք են: Ըստ Վախուշտիի՝

---

[28] История Грузии, ч. 1, с. 367-368.
[29] Նույն տեղում, էջ 369:
[30] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 94:
[31] Նույն տեղում, հմմտ. Парсадан Горгиджанидзе, с. 108-109; Вахушти Багратиони, с. 67.
[32] История Грузии, ч. 1, с. 373.
[33] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 95:

Լուարսաբը Քարթլիի նախկին տիրակալ Սիմոն Թագավորի թոռն էր[34]: Փ. Գորգիջանիձեն նրան համարում է Ռոստոմի ազգականներից մեկի՝ Թեյմուրազ միրզայի որդին[35], իսկ ըստ Զ. Քանաքեռցու՝ Լուարսաբը Ռոստոմի որդին էր[36]: Արժանահավատ է Փ. Գորգիջանիձեն, քանզի նա տասը տարեկանից մեծացել էր Ռոստոմի խնամակալությամբ և վերջինիս մտերիմներից էր[37]:

Որդեգրումից կարճ ժամանակ անց Լուարսաբը որսի ժամանակ սպանվում է: Այս իրադարձության հանգամանքների մասին Զ. Քանաքեռցին հաղորդում է մի տեղեկություն, որը հանդիպում ենք միայն Փ. Գորգիջանիձեի մոտ: Զ. Սարկավագի համաձայն՝ որսի ընթացքում անզգուշորեն արձակված գնդակներից մեկը դիպչում է թագաժառանգին, և նա մահանում է: Կասկածյալներ են համարվում «Հայ Մամիկոնեան» ազգից համարվող Բայանգուր Թումանեցին (ըստ Փ. Գորգիջանիձեի՝ Բայանգուր Թումանիշվիլի) և Շիշուշ Բարաթեցին (ըստ Փ. Գորգիջանիձեի՝ Սիաուշա Բարատաշվիլի): Ռոստոմի հրամանով նրանց միջև տեղի է ունենում մենամարտ, որից հաղթող է դուրս գալիս Բայանդուրը[38]: Վախուշտին տեղեկություն է տալիս միայն Լուարսաբի վիրավորվելու և մահվան մասին, սակայն այս մենամարտին չի անդրադառնում[39]: Հետաքրքիր է հատկապես այն հանգամանքը, որ վրաց պատմիչները Լուարսաբի մահվան տարին չեն նշում, մինչդեռ Զ. Քանաքեռցին այն թվագրում է 1650-ով[40]: Մեզ է հասել Եփրեմ Ա Զորագեղցի կաթողիկոսի (1809-1830) անունից Էջմիածնի վեց արքեպիսկոպոսների և երկու վարդապետերի ստորագրած և անձնական կնիքներով վավերացրած «Տոհմականութիւն եւ ճիւղաբանութիւն Մամիկոնեանց, որք կոչին այժմ Թումանեանք» վերնագրով կոնդակը, որտեղ, հիմնականում հիմնվելով վերոհիշյալ մենամարտի վերաբերյալ Զ. Քանաքեռցու վկայության վրա, Թումանյանները համարվում են Մամիկոնյան իշխանական ընտանիքից սերված[41]: Լուարսաբի մահից հետո Ռոստոմը որդեգրում է նրա եղբայր Վախթանգին[42], որին Զ. Քանաքեռցին համարում է Բագրատունի[43]: Քանի որ գահակալությունն օրինական կա-

---

[34] Вахушти Багратиони, с. 67.

[35] Парсадан Горгиджанидзе, с. 101.

[36] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 96:

[37] Парсадан Горгиджанидзе, с. 11.

[38] Այս մենամարտում, իբրև գորեցի հայի, Փարսադան Գորգիջանիձեի համակրանքը հայազգի Բայանգուրի կողմն է (Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, քաղվածքներ վրացերեն բնագրերից հայերեն թարգմանությամբ, ներածություն – ծանոթություններով և հավելվածներով, հ. II (ԺԳ – ԺԸ դար), Ե., 1936, էջ 83): Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 96-98, հմմտ. Парсадан Горгиджанидзе, с. 120-121.

[39] Вахушти Багратиони, с. 67.

[40] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 98:

[41] Մելիքսեթ-Բեկ Լ., Թումանյանների ծննդաբանությունը եւ Եփրեմ կաթողիկոսի 1813 թվի «կոնդակը» (Պատմա-բանասիրական պրպտումներ, աշխատասիրությամբ Պ. Մուրադյանի, Ս. Էջմիածին, 2010, էջ 125-133):

[42] Парсадан Горгиджанидзе, с. 121.

[43] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 98:

րող էր համարվել միայն շահական համապատասխան հրամանով, Վախթանգը 1658 թ. Ռոստոմի մահից անմիջապես հետո, մեկնում է շահ Աբբաս II-ի մոտ: Սակայն նախքան Վախթանգի արքայական իրավունքները հաստատելը, շահը նրան ստիպում է մահմեդականություն ընդունել, որից հետո կոչվում է Շահնավազ (1658-1676)[44]: Այս մասին Զ. Քանաքեռցին գրում է. «Եւ յետ սակաւուց մեռաւ նա. իսկ Վաղթանկն առեալ ընդ իւր բազում ազատ որդիս՝ եւ գնաց առ Սանի-Աբաս թագաւորն Պարսից՝ որ է փոքր Շահ-Աբաս. ընկալաւ ի նմանէ զիշխանութիւնն, եւ անուանեցաւ Շահ-Նաֆաս, որ է Շունչ արքայի»[45]: Այն փաստը, որ Վախթանգը շահի մոտ է մեկնել Ռոստոմի մահից հետո, հաստատում է նաև Փ. Գորգիջանիձեն[46]: Ի տարբերություն Զ. Քանաքեռցու և Փ. Գորգիջանիձեի՝ Վախթանգի մեկնումը շահի մոտ Վախուշտին ներկայացնում է Ռոստոմի կենդանության օրոք՝ 1653 թ. ամռանը[47], որը ճիշտ չէ:

Շահնավազը նպատակադրվել էր միավորել Քարթլին և մյուս վրացական թագավորություններն ու իշխանությունները: Նրա ջանքերով՝ 1661 թ. դրությամբ նվաճվել էին Իմերեթը, Կախեթը և Քութայիսին[48]: Բնականաբար, սա չէր կարող դուր գալ շահ Աբբաս II-ին հաջորդած շահ Սուլեյմանին (1666-1694), որը Շահնավազին կանչում է արքունիք՝ հաշվետվություն տալու: Զ. Քանաքեռցին սա համարում է Շահնավազի հանդեպ չարախոսության արդյունք[49]: Սակայն շահի մոտ մեկնելու ճանապարհին՝ Խոշքարում, Շահնավազը 1676 թ. մահանում է՝ գահը թողնելով իր որդի Գեորգի XI-ին (1676-1688)[50]: Զ. Քանաքեռցու վկայությամբ՝ Շահնավազը կյանքին վերջ է տվել ինքնասպանությամբ՝ վախենալով շահական պատժից[51]: Նույնն է պնդում նաև Զաքարիա Ադուլեցին[52]: Ի տարբերություն հայ պատմիչների՝ Փ. Գորգիջանիձեն և Վախուշտին Շահնավազի մահը հիվանդության հետևանք են համարում[53]: Հավանաբար, վրաց պատմիչները չեն ցանկացել ընթերցողին ի ցույց դնել իրենց արքայի թուլակամությունը, որը դրսևորվեց շահական անխուսափելի պատժից ազատվելու ելքն ինքնասպանության մեջ փնտրելով:

Գեորգի XI-ը շարունակում է երկրի միավորման հոր քաղաքականությունը: Վրաստանի միավորման գործում և պարսկական լծի դեմ պայքարում նրան սատարում էին վրաց իշխաններից ոմանք՝ արքա-

---

[44] Парсадан Горгиджанидзе, с. 127.
[45] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 95:
[46] Парсадан Горгиджанидзе, с. 127.
[47] Вахушти Багратиони, с. 68.
[48] Նույն տեղում, էջ 69-70:
[49] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 98-99:
[50] Զաքարիա Ագուլեցի, Օրագրութիւն, Ե., 1938, էջ 140, Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հ. I, էջ 289, հմմտ. Вахушти Багратиони, с. 75; Парсадан Горгиджанидзе, с. 135.
[51] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 99:
[52] Զաքարիա Ագուլեցի, էջ 140:
[53] Вахушти Багратиони, с. 75; Парсадан Горгиджанидзе, с. 135.

յի եղբայր Արչիլի գլխավորությամբ, որն արդեն տիրում էր Իմերեթիային[54]:

Զ. Քանաքեռցին Գեորգի XI-ի գլխավորած հակապարսկական քաղաքականության դրսևորումը սխալմամբ վերագրում է ավելի ուշ գահակալած շահ Սուլթան Հուսեինի (1694-1722 թթ.) ժամանակաշրջանին: Բացի այդ, ճիշտ չի ներկայացնում նաև նրա կենտրոնախույս ձգտումների պատճառը: Զ. Քանաքեռցու հաղորդմամբ՝ հակապարսկական այս քայլերի պատճառը Գեորգի XI-ի դստեր հանդեպ շահ Հուսեյնի հավակնություններն էին[55]:

Շահ Սուլեյմանը որոշում է Գեորգիի փոխարեն Քարթլիի թագավոր նշանակել Թեյմուրազ I-ի թոռանը՝ Հերակլին, որն արդեն 14 տարի Սպահանում էր: Վերջինս ընդունում է մահմեդականություն՝ ստանալով Նազար-Ալի անունը[56]: Այս իրադարձության մասին Զ. Քանաքեռցին գրում է. «Իսկ Շահն ... ետ նմա (Հերակլին – Վ. Ա.) խանութիւն Թիֆլիզոյ, եւ անուանեաց զնա Վալի-խան, և մեծաշուք փառօք առաքեաց ի Տփխիս»[57]: Հերակլին անվանելով «Վալի-խան» պատմիչն արժեքավոր տեղեկություն է տալիս Վրաստանի արքաների կարգավիճակի մասին: Խնդիրն այն է, որ «վալի» էին կոչվում Վրաստանի այն թագավորները, որոնք իրական իշխանություն չունեին և համարվում էին պարսից շահի փոխանորդները[58]:

Հերակլը վրացական գահ է բարձրանում 1688 թ.[59]՝ իշխելով մինչև 1703 թ.[60]: Ինչպես Զ. Քանաքեռցին է վկայում, Հերակլի գահակալումը Վրաստանում մեծ դժգոհություն է առաջացնում ինչպես վրացիների, այնպես էլ հայերի շրջանում: Պատմիչի խոսքերով՝ նորանշանակ արքան մի շարք սահմանափակումներ է դնում եկեղեցական արարողությունների վրա, որի հետևանքով «միաբանեցան քրիստոնեայքն՝ Հայք եւ Վիրք, եւ գրոհս տուեալ գնացին ի դուռն նորա, եւ աղաղակելով պախարակէին, եւ այպանէին՝ ասելով, դու ուրացար զհայրենի հաւատն քո»[61]: Վախուշտին ուղղակիորեն չի խոսում Հերակլի հակաեկեղեցական քաղաքականության մասին: Նա նշում է, որ իշխանության գալով՝ վրաց արքան պաշտոնազրկում է բազմաթիվ բարձրաստիճան հոգևորականների, այդ թվում՝ կաթողիկոսին՝ նրանց փոխարեն նշանակելով իրեն հավատարիմ մարդկանց[62]: Թեև Վախուշտին չի նշում նորանշանակ հոգևորականների ապօրինությունների մասին, սակայն պետք է ենթադրել, որ մահմեդական արքան ամենայն հավանականությամբ վերջիններ-

---

[54] Вахушти Багратиони, с. 77.
[55] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 99:
[56] Вахушти Багратиони, с. 80.
[57] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 100:
[58] История Грузии, т. I, с. 303.
[59] Вахушти Багратиони, с. 81.
[60] Նույն տեղում, էջ 92:
[61] Զաքարիա Սարկաւագ, հ. II, էջ 101-102:
[62] Вахушти Багратиони, с. 81.

ըիս միջոցով իրականացրել է հակաեկեղեցական այն քաղաքակա-նությունը, որի մասին վկայում է Զ. Քանաքեռցին:

Ամփոփելով Վրաստանի XVII դ. պատմության վերաբերյալ Զ. Քանաքեռցու «Պատմագրության» վկայությունները, կարող ենք նշել, որ այն, չնայած իր որոշ փաստական վրիպումներին, իրադարձությունների օբյեկտիվ լուսաբանմամբ և պատմական արժեքավոր տեղեկությունների ընդգրկմամբ կարելի է դասել վաց ուշմիջնադարյան պատմության կարևոր սկզբնաղբյուրների թվին: Այս երկի վկայությունների արժանահավատության ուղղակի հաստատումը պետք է համարել այն կարևոր հանգամանքը, որ իրադարձությունների մեծամասնության նկարագրման համար պատմիչն օգտվել է ականատեսների վկայություններից: Զերծ մնալով վրացական պալատական ներբողական պատմագրությանը բնորոշ թերություններից ու կողմնակալությունից՝ Զաքարիա Քանաքեռցին բավարարվել է Վրաստանի XVII դ. ազատագրական պայքարի վերաբերյալ փաստերի պարզ արձանագրումով՝ հետագա վերլուծությունները թողնելով ընթերցողին:

ВОПРОСЫ ИСТОРИИ ГРУЗИИ XVII ВЕКА
В КОНТЕКСТЕ "ХРОНИКИ" ЗАКАРИЯ КАНАКЕРЦИ

ВИРАБЯН А. С.

Резюме

Труд Закария Канакерци содержит ценные данные о восстании против персидского ига под предводительством Георгия Саакадзе. Свидетельства историка подтверждают, что Георгий Саакадзе не преследовал цель освобождения грузинского народа от персидского ига.

"Хроника" служит важным источником изучения периода правления царей Ростома (1633-1658), Шахнаваза (1658-1676), Георгия XI (1676-1688), Геракла I и политических перипетий этого исторического отрезка.